

ուրիշ վանքերու նման չունի ոչ բնական և ոչ արհեստական զբօսավայրեր, հաճոյք և միլիթարութիւն: — Գ. Տկարակազմ, հիւանդոտ և փափկասուն կեանք վարողներուն համար պաշտօններն անտանկի են: — Գ. Պաշտօններն բանագէտներուն անյարմար կրգան: — Ե. շատերն ալ ոչինչ պատճառ չունենալով դուրս երթալու ցանկութեամբ կրմբոտանան իշխանութեան դէմ և բանը ծայրայեղութեան հասցնելով՝ կը մեկնին: — Զ. և վերջապէս, քաջ համոզուած լինելով, որ դուրս ելնելով աւելի դիւրութեամբ շահաւէտ գործ, պաշտօն, աստիճան և իշխանութիւն պիտի ընդունին, ինչպէս ընդունուած են ընդդէմ Հայաստանեայց եկեղեցւոյ բարեկարգ օրինաց, և թէպէտ Միաբանութիւնը շատ անգամ բողոքած է այս շարեաց դէմ, բայց ոչ որ ուշադրութիւն չէ դարձուցած, ցանկալի է որ Արարատի ձայնը լսելի լինէր և այս շարեաց վերջ դրուէր:

Խորին շնորհակալութիւն Ձեր յայտնած ցանկութեանց և արդար պահանջից մասին, ի սրտէ կըմտալով ձեր նոցա իրադարձութեան համար և կըմնամ աղօթարար

Միաբան և նուիրակ Ս. Երուսաղէմի

Մամբրէ Վ. Յ. Մարկոսեան:

1883, Օգոստ. 27.

Նոր Կիւիթեան:

Ահա եւ Արշալոյս Արարատեան Կապրի հրատարակութիւնն:

### ԵՊԻՓՏՈՍԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԸ

Աստանան Ասեփան փաշա. — Հարեկց Մարտիրոս Էթէտի. — Մեսրոպ Եպիսկոպոս. — Ազգային Քաղաքական մողով. — Տէր Կերսէս Պատրիարք:

Պահիւրէի նշանաւոր ազգայիններու կողմէ, տեղւոյն ազգային գործոց յոռի ընթացքը քննադատող գրութիւններ հասած են մեզ, Այս գրութեանց հետեւեալը, ինչպէս նաև այն մասնաւոր տեղեկութիւնները, զորս գալ անգամ պիտի ներկայենք մեր ընթերցողաց աչացն ու դատողութեան, իրենց ծանրակշռութիւնն ունին և պայծառ ու մեկին կը ցուցնեն թէ, որքան ձախող և թիւր քաղաքականութիւն մը բռնած է Պատրիարքարանը այս խնդրոյն մէջ:

Հարկ չ'ենք զգար թեպէտ, առ այժմ մեր մասնաւոր տեսութիւններն ընել, քանի որ գրութեանց պատուաւոր հեղինակները, որք կրնան իշխանութիւններ համարուիլ Պահիւրէի հոյ հասարակութեան մէջ, լրջաբար քննադատած և այսու՝ որոշ կերպով բացատրած են այն սխալ ձամբան, ուր մտած է Պատրիարքարանը Պահիւրէի ազգային գործերը լուծուլու համար: — Հարկ չ'ենք զգար՝ սակայն աւելորդ ալ չէ կարծեմ ըսել թէ, Պատրիարքարանը եթէ դիտմամբ, կամ ազգեցութեամբ և

կամ պարզամտութեամբ ըրած է այդ կերպ անօրինութիւն մը (որոյ դժուար է հաւատալ), շատ սխալ ընթաց մ'է բռնածը:

Մենք՝ իրաւունք ունինք կարծելու և մտտահասութիւն ունինք հաւատալու որ: աւելի դիւրութեամբ գոհացուցիչ վախճանի մը պիտի յանդէին Եզրիպտոսի ազգային գործերը, և թէ Պատրիարքարանը քիչ մը աւելի հեռատեսութեամբ ձեռնարկէր այս գործին, այսինքն և թէ իր կարգած պատուիրակութիւնը յանձնարարած ըլլար այն անձին՝ որոյ զօրութիւնն ու ազդեցութիւնը մեծամեծ դիւրութիւններ կրնային ցուցնել այդ գործոց խաղաղօրէն և նպաստաւոր կերպով կարգադրուելուն, այն անձին, հարկ է միթէ անուանել, որոյ համար այնքան դիւրին է Եզրիպտոսի ազգային պարտուց բարձման միջոցը խորհիլ և գործադրել, կամ գոնէ գործադրել տալ, որքան դիւրին է Պատրիարքարանի համար կոնգակ մը գրել և կամ պատուիրակ մը շրկել, Սակայն Պատրիարքարանը, գիտութեամբ կամ անգիտութեամբ սխալեցաւ և փոխանակ այն անձին համակրանքն ու ազգասիրական շարժումն ստանալու, նորա արհամարանքն ստացաւ: Արնանք վկայել այս ըսածնիս, և Պատրիարքարանի ալ զատողութեանը յանձնել՝ թէ որքան տարբերութիւն կայ այն ընդունելութեան մէջ՝ զոր ըրաւ այն անձը, այս անգամ զօլերայի ատեն Պահիրէի աղքատ հայոց համար նպաստ տուած ատեն, քան այն ընդունելութեանց մէջ զոր ոչ նուազ պարագաներու մէջ ցուցած է: Եւ միթէ արհամարանօք 50 ոսկի՞ միայն կը շրկէր այն անձը՝ որ 1865 ի զօլերայի ատեն 350 ոսկի շնորհեց, և ինքնաբերաբար, մի և նոյն նըպատակին համար: Ինչ որ է, առ այժմ՝ թողունք որ Պահիրէի հայոց յըջամիտ մասին կարծիքը խօսի:

### Պահիրէ 31 Յուլիս 1883.

« Թ էր ճ է մ ա ն ը Ե Ֆ ք ե ա ր Ի Յ ու լ ի ս 14 թ ի թ եր թ ն կ ը հ ը ա տ ա ր ա կ է թ է »

Կ. Պօլսոյ Քաղաքական ժողովը, ընդ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Լոր, վերջապէս Պահիրէի ազգային գործերը կարգադրելու համամիտ է գտնուէր, ն. Ասեմ: Արսլանեան տօքթօր Ստեփան փաշայի մի տեղեկազրոյն վրայ, յիշեալ Քաղ. ժողովը կարծիք է հարցուցեր Ս. Մեսրոպ եպիսկոպոսի, որ այլ ևս բնաւ երբէք Պահիրէի ազգային պարտուց խնդրոյն մէջ մասնակցութիւն չունենալն յայտնելով հանգերձ յուսացէր է թէ հատուցման մասին միջամտութիւն մ' ընելու կարող է: Քաղ. ժողովն Մեսրոպ եպիսկոպոսի միջամտութիւնը ազգաշահ և կարեւոր նկատելով և միանգամայն գիտնալով թէ բարոյական ազդեցութիւն մը կրնայ ունենալ պարտատեարց վրայ, սոյն խնդրոյն հաշտարար կերպիւ վերջանալը կարելի տեսէր և որոշեր է յիշեալ եպիսկոպոսի համամտութեամբ Պահիրէի ազգային պարտուց մի մասը զեղչել, հաստատել զայն, և վճարմանը համար պէտք եղածն հոգալու:

մասին գրել Քահարէի Ազգ. վարչութեան, Քաղ. ժողովոյ սոյն որոշումն պարտատեարց ծանուցանել Մեսրոպ եպիսկոպոսի յանձնարարուեր է, զի սա փոխանորդ և միջնորդ կանգնէր է նոցա կողմանէ:

Մի և նոյն թերթը յուլիս 21 թուոյն կը յաւելու յայտարարելով, Մեսրոպ եպիսկոպոս և Հարենց Մարտիրոս էֆէնտի պայմանագրեր են Քաղ. ժողովոյ որ եթէ իրենց իրաւախոհ միջնորդութեամբ որոշեալ հազար ոսկւոյ գումարն ի Վ. Պօլիս հատուցուի, իրենք ալ Քահարէի ազգային կալուածոց (եկամտից) վրայ գրուած սէքէսթրօնները վերցունել պիտի տան: Աւստի Քաղ. ժողովն հեռագրէր է Ն. Ասեմ. Ստեփան փաշայի, որ այս գումարը փոխանակագրով մը Վ. Պօլիս ուղարկէ, Հոս կը յիշենք, կըսէ թերթը, թէ սէքէսթրօյի տակ եղած ազգային կալուածոց եկամուտք մի մասամբ Հարենցի անցած են:

Տեղւոյս ազգային գործոց վրայ տեղեկութիւն շունեցող մեր Պատ. ազգայինք պիտի զմայլին Պատրիարքարանի այս անմիջական գործադրութեամբ յաջորդուած որոշմանց վրայ. դիւրին է նոցա միայն բայց ոչ ճշմարտութեան աչքը շլացունել այդ ոսկեզօծ փոշուով. զի եղելութիւնք ինքնին կը մեկնեն Պատրիարքարանի ընթացքն, որ բոլորովին անկեղծ և անբասիր չէ, մանաւանդ Գեր. Ս. Պատրիարք Հօր, որն որ վերջին օրերս, Հարենցի, Վիւզէլ օղլուի կամ Հեռաթիի և Մեսրոպ եպիսկոպոսի մէջտեղ արդէն յարգարեալ համաձայնութեան տեղեակ էր՝ Հարենցի մի ընտանեկան նամակէն, որոյ ընդօրինակութիւնը, Ա. Արսլանեան Ստեփան փաշայի շնորհիւ, այսօր Գեր. Ս. Պատրիարք Հօր ձեռքն է և իրեն գէմ անուղղակի ամբաստանութեան թեթեւ արատ մ'ալ կը պարունակէ:

Պատ. Քաղ. ժողովն անշուշտ տեսած է այն խորհրդաւոր գիրն որոյ կրնայ մեծ կարևորութիւն տրուիլ՝ ճարտարութեամբ ձեռք ձգուած խարգաւանքի մը թելն ճամարուելուն:

Ճշմարտն, ազգային հին խնդիրներ լուծելու գեղեցիկ միջոցներ:

Պատրիարքարանի կողմանէ Եգիպտական խնդրոց ամենէ յետնոյն նախապատուութիւն մը տալով անկեղծութեան և իրաւանց հակառակ տրուած որոշումն, որոյ յարգարեալ կարգադրութիւն մը լինելն յայտնի է Եգիպտահայոցս, գուցէ կարենայ ոմանց աչքին արգարանալ այսու թէ՛ անհրաժեշտ էր այդ պարտուց հին խնդիրն որ և է կերպիւ վերջացնել Պատրիարքարանը գլխի ցաւէ մ'աղատելու համար:

Բայց ինչպէս պիտի արգարանան մարդկութեան, խղճի, և հասարակութեան ողջամիտ դատողութեան առջև:

Ա. Պատրիարքարանի լիազօր նուիրակ Ն. Ասեմ. Արսլանեան տօթթէօր Ստեփան փաշա, որ ապօրինի պահանջք մը (թէ և միջազգային զատարաններէ վճռուած, բայց ազգին առջև խայտառակութեան դրոշմ կը կրէ) փոխանակ օրինաւոր ընտրութեամբ կազմուած ժողովոյ մը որոշման ենթարկելու և նորա ձեռք գործադրելու, նոյն իսկ խայտա-

ոսկուծեան հեղինակին գրպանը ուռեցնելու ծիծաղելի դիրքով կ'ներկայի. իբր թէ նա ոչ թէ կեղծ պարտատեր մ' այլ ստուգիւ պարզ իրաւախոհ միջնորդ, ոչ թէ մեր հարստահարն՝ այլ բարերարն եղած լինէր:

Բ. Հարենց Մարտիրոս էֆ. անուն անձը՝ որն որ կիսամեռ մարմնոյ մը վրայ ճանկի և կոցի վերջին հարուածը տուող ագուաւի տխուր գերը կ'խաղայ, կտոր մը ինք յափշտակելով:

Գ. Եգիպտոսի նախկին առաջնորդ Ն. Ս. Մեսրոպը եպիսկոպոս, որ իբր գող ամբաստանուելէ վերջ՝ այսօր Պատրիարքարանի մօտ վաճառաց միջնորդի գեր կ'խաղայ և 1000 ոսկին համեմատարար գրպանելու ազգաշահ ծանրացած ամբաստանուծեանց աղտը նոյն իսկ Պատրիարքարանի մէջ:

Գ. Պատ. Քաղաք. Ժողովն Աեղր. Վարչութեան, որ Պատրիարքարանի հին որոշումները գիւանատան փոշուտ անկիւնները կ'մոռնայ, քննչաց տեղեկագիր, Եգիպտական կառավարութեան ուղղեալ բողոք, պաշտօնագրեր ազգային որոշմունք և տնօրինութիւնք, 1472 ոսկւոյ խնդիրը միջազգային և մերազգային ատեաններու առջև փաստարանելու և լուծելու համար գրեթէ նոյնչափ գումարի հասած անտեղի ծախք, բոլորն ալ յօդս ցնդելով՝ ինքն, Քաղ. Ժողով Աեղր. վարչութեան, այսօր կը ճանչնայ, կ'հաստատէ և հոս իր լիազօր գործադրին կ'հրամարէ վճարել ի Ա. Պօլիս Քահրէի ազգ. սնտուկէն վեղչեալ պարտուց մի մասն 1000 ոսկի: (???)

Ե. Գեր. Տ. ներսէս Ս. Պատրիարք Հայրն, որ կ'նախագահէ այս ամեն աջողակ ձեռնարկին և օրինաց գործադրութեան հսկողի մ' անաչառութեան հակառակ, անտարբեր կնայի մեր վիճակի ամենէ նուիրական իրաւանց ոտնակոխուիլը:

Զ. Եւ ամենայն երևելի և աներևոյթ հրեշտակք և արբանեակք որք ընդ սոցին:

Եւրոպացիք վաճառականութեան և առևտրական գործոց մէջ իրաւամբ խիստ յարմար և ճարտար կ'դատեն Հայ ազգը, և ստուգիւ, ի՞նչ բան կարելի է գտնել որ Մեսրոպ եպիսկոպոսի պահանջքն (որոյ մէջ պատրիարքարանի տրուած կաշառքի խնդիր մ' ալ կար) այս կերպիւ հատուցանելու համար, շահավարութեան վեղեցկագոյն օրինակ մը կարենայ ընծայել Պարծա՛նք մեր Պատրիարքարանի այդ տաղանդին, Շահավարութիւն մ' որոյ հեղինակները կարծես իրարմէ աւելի նախանձախնդիր Քահրէի ազգային ոգեվար վիճակը դարմանելու պատուակաւ, նորա ժողովրդային բոլոր իրաւասութեան ձայն հայ ձէպ խեղդելու գործին մէջ հոգեւանդ կաշխատին զիրար գերազանցել: Առշարունցի մը անհատական և ընկերային ազգօգուտ ձգտումներու և ձեռնարկութեանց դէմ զօր տուողն համբոյրի կ'ձևակերպէ քմծիծաղով մը, կ'ջլատէ ազգ. գործոց բարեփոխմանց վրայ յուսադիր սիրտերու ամեն եռանդ:

Երբեմն մեր սիրելի Հովուին խարդաւանօք մեր աղօք սնտուկին վրայ բեռնաւորեալ պարտուց վճարումն առ մի երկրորդ, վերջապէս, այժմ, անհրաժեշտ էր, տասը տարուան միջոցին Մեսրոպ եպիսկոպոսի ճարտար ձեռքօք, մասնաւոր նպատակաւ պղտորեալ ջրին մէջ որսուած ձուկն էր այն, մեր ազգային իրաւունքը պաշտպանելու գործին մէջ անգիտութեան տրուած տուգանքն էր. միջազգային դատարանքն իսկ պատրեցան և վճռեցին այդ պահանջքի հատուցումն: Սոյն հատուցման յապաղումն՝ ազգային սնտուկին վնասարեւր, տոկոսի դիզումն՝ տնտեսագիտութեան անհմուտ անձի գործ, կալուածոց եկամտից վրայ սէքէսթրօն երբ ընդերկար թողուլ՝ սահմանազրկան վարչութեան մէջ օտարազգեաց ձեռք տեսակ մը տիք թաթօրութիւն կրնային համարուիլ:

Բայց միթէ անհրաժեշտ էր այն խնդիրը վերջացնելու համար խարդաւանաց հեղինակին դիմել, նորա անձնական շահը իրաւասոհ միջնորդութիւն մը նկատել, նորա վրայ ծանրացած դատակնիքը կերպիւ իւրք վերցունել, արգարութեան խկզրունքը ոտնակոխել, մոռնալ 1879 մայիս 19 թուականին տեղւոյս վարչութեանէ առ Գեր. Տ. Ներսէս Ս. Պատրիարք ուղեալ գրոյն պարունակութիւնը և աւելի վերջը զայն հաստատող, Տէր Պրեան քննիչ Հօր տեղակազիրն, որոնք Մեսրոպ եպիսկոպոսի արժանաւոր խորագիրն իր ճակտին վրայ գրոշմած են: Երբ միթէ անհրաժեշտ էր որ Ս. Պատրիարք Հայրն Եպիսկոպոսի վիճակը վերականգնելու համար իւր անտարբերութեամբ կամ միամտութեամբ զեռ ևս քաջաբեր գտնուի կեղծ փոխանցումի մը գործառնութեանց շարունակութեանը, խարդաւանանք մ'որոյ, երբ դատավճանց զէմ քիչ մը ուշ բողոքուեցաւ հոս, միջազգային դատարանաց քուրտ'արէլի օրէնսգէտ նախագահն իսկ, ստուգութիւնը ճանչնալը ցաւօք խոստովանեցաւ յատենի: Երբ միթէ անհրաժեշտ էր Պօլսոյ Քաղք. ժողովոյ մասնաւոր նկատմանց զոհ ձգել մեր ազգային անբռնաբարելի իրաւունքն:

Ի՞նչ իրաւամբ և ո՞ր օրինաց տրամադրութեամբ մեր ազգային սնտուկին ձեռք կ'երկարէ նա՞ լիազօր նստիւրակի մը միջոցաւ, որոյ վրայ կը մասնաւորէ, կ'ամփոփէ ամբողջ հասարակութեան մ'իրաւասութիւնն առ որում ինքն իսկ, Պատրիարքարան, ստորակարգեալ է:

Ի՞նչ կրնայ համարուիլ՝ երէկ ժողովրդային կողմն իւրացունող դատապարտեալի մը ապօրինի ճանչցուած պահանջքը, այսօր ձեւի մը տակ դնել և վճարել անոր ձեռք նոյն իսկ իւր հարստահարած գանձին կտորներէն:

Ն. Վ. Արսլանեան Ստեփան փաշա, եթէ սոյնը է իր կամքը, ժամանակը, ստակն և ազգեցութիւնը, մեր ազգային ձրի պաշտօնավարութեանց մէջ Պատրիարքարանի սոյն օրինակ որոշմանց գործադրութեան զօհելու և կանխելու, կը շնորհաւորեմք զինքն իւր լիազօրութեան մէջ, բայց կը ցաւիմք հոս յիշելու, ինչպէս որ Ն. Վ. սեմութիւնն ալ

քաջ գիտէ, որ եգիպտական կառավարութիւնը՝ Օսմանեան Տէրութեան կողմանէ մեզ տրուած առանձնաշնորհութիւնքն պաշտպանող նուիրակաց միայն յարգեալ օգնութիւն կընծայէ և ոչ թէ Պատրիարքարանի մասնաւոր նպատակներու ծառայող լիազօրաց: Մեսրոպ պատկոյսի ժամանակ ազգային խլրտումներն մեծ փորձառութիւն տուին կառավարութեան և իր դիւանատանց մէջ ցաւալի հետքեր ձգեցին. նշանաւոր կարեւորութիւն մ' ունի իր աչքին տեղւոյս ո՞ր և է գաղթականութեան մը բարգաւաճումն, և այս աւանդական է Մուհամմէտ Ալիի ժամանակէն, յարգելով նոցա բոլոր ազգային իրաւունք և առանձնաշնորհութիւնք. այսու կ'փայլի Ն. Բարձրապատիւ Խտիվին խաղաղասէր համբար:

Արդ՝ հակիրճ կերպիւ նշանակենք Պատրիարքարանի անբաղարար փութիւնը և տեսնենք եթէ բնարարուած են մեր ժողովրդային ազանձնաշնորհութիւնք նոյն իսկ մեր ազգային շրջանին մէջ և օսմանեան կամ եգիպտական կառավարութեանց առջև, նորին Ս. Պատրիարք շօր կոնդակին տրամադրութեամբն և Ն. Ա. Արսլանեան տօբթօր Ստեփան փաշայի իրր լիազօր նուիրակ անուանմամբ որոյ ինչ աստիճան պաշտօնական կարեւորութիւն մ' ունեցած ըլլալը ուրիշ առթիւ պիտի յայտնենք:

Գանք կոնդակին, այս գիրը երեք պաշտօն կ'յանձնէ նորին Ասեմութեան:

Ա. Պարտուց խնդիրը լուծել. — նորին Ա. կ'կարգադրէ և Պօլսոյ Քաղաք. ժողովը (մինչդեռ հաստեղինը կազմակերպեալ չէ տակաւին) կ'լուծէ և իր գործադիրն հոս կ'վճարէ եղեր:

Զարմանք, ո՞ր գաւառի, վիճակի, գիւղի կամ թաղի մ' իսկ ազգսնտուկը կամ արկղիկը, թող թէ տուգանք մ' այլ ծախք մը հատուցանելու համար, առանց անոր տիրոջ ներկայութեան կամ հաւանութեան կրնայ եղեր լիազօրի մը ձեռք վատնուիլ: Միթէ Պատրիարքն իսկ ունի՞ այդ իրաւասութիւնը զոր տուած է Ն. Ա. Ստեփան փաշայի:

Բ. Ժողովները վերականգնել. — Ինչ հարկ, քանի որ մէկ կողմանէ լիազօր մ' ամեն ինչ տնօրինելու արտօնութիւնն ունի ըստ Պատրիարքարանի սահմանադրական օրինաց, և միւս կողմանէ տէր Սահակի օրով քանի մ' անձերէ ձեւակերպեալ մասնաժողովն վարչութեան մ' օրինաւորութեան գոյնն ունի տակաւին Կ. Պօլսոյ Քաղաք. ժողովոյ աչաց առջև:

Միաբանեցէք, ողջամիտ ազգայինք, այս երկու հակասութիւնները:

Գ. Անտրել առաջնորդ մը. — Ար՞ե իրաւունք որ՞ե կ'տացուի, եթէ այդ ընտրութեան մէջ պարզապէս գաւառ. կամ թաղ. ժողովոյ մը նախագահելու մտօք պէտք ենք ըմբռնել Ն. Ա. Ստեփան փաշայի լիազօրութիւնը, օրէնք կ'պահանջեն Պատրիարքարանէ գլխովին և ոչ թէ մասամբ միայն յարգել տեղւոյս ընտրողական բացարձակ ի-

բաւուներն և իր ընտրելոց իրաւասութիւնն թէ պարտուց և թէ առաջ-  
նորգի մը ընտրութեան խնդրոց մէջ:

Տեղւոյս և հեռաբնակ ազգայնոց կ'ընտրուի մեկնել այս հանելուկն  
և արժանաւոր անուն մը տալ Պատրիարքարանի այս ընթացքին. ըստ  
մեզ օրէնքի մը շնորհած իրաւուներն անդամատել. օրէնքը ղեղծել է, ան-  
կից շեղիլ է:

Քայց ընդհանուր ազգին վերականգման մեծ գործին մէջ բարձր քա-  
ղաքագիտութեանց վերէն սաւառնող քաղաքագէտ Պատրիարքարան  
կրնայ եղեր այսչափ օրէնսագէտ չ'լինիլ: Իւր այս ծուռ քայլերը մասնա-  
ւոր նպատակ մը չունին: Ինչ նոր փորձանք կ'պատրաստուի ազգին  
գլխուն, ուշադրութեան առնուած է: Միթէ Պօլսոյ փաստաբան ազ-  
գայինք անաչառապէս իմաստասիրած են Եգիպտոսի խնդիրը: Իւր ինչ-  
պէս Պատրիարքարան պիտի ազատի այն պատասխանատուութենէ որ,  
մէկ կողմանէ, հակառակ Սահմանադրական սկզբանց, Ն. Վ. Ստեփան  
փաշան լիազօր գործիք կը կանգնէ, և միւս կողմանէ տեղւոյս ազգայ-  
նոցս անբռնարարելի իրաւանց յանդուգն ձեռք կ'երկարէ՝ ազքատին,  
գպրոցին և եկեղեցւոյն նուիրական լուծայն գողերու կոկորդը և իր  
Փրոպականութայի աւազանը լեցնելով, որոյ վրայ հաշիւ և համար հարց-  
նելու և առնելու բացարձակ իրաւուներն ազգայնոցս ազատ քուէար-  
կութեամբ ընտրուած օրինաւոր վարչութեան մը կ'պատկանի:

\* \* \*

## ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ ՃԵՄԱՐԱՆԻ.

Սեպտեմբերի 24 ին Ս. Գէորգայ տօնի օրը կատարուեց ձեմա-  
րանի իններորդ տարեգարձը շքեղ հանդիսով: Հանդիսաւոր Ս.  
պատարագից յետոյ Միաբանական Ուխտը ըստ իւրաքանչիւր  
աստիճանի եկեղեցական զգեստներով, առաջ՝ ձեմարանի աշա-  
կերտները առաջնորդութեամբ ուսուցչական խմբի, յետոյ եր-  
գեցիկների խումբը յաջմէ եւ յահեկէ ունելով Սրբազան Եպիս-  
կոպոսների եւ Վարդապետների կիսաշրջանը, խաչ—խաչվառնե-  
րով եւ ամենայն սպասուք բոլորեցին հանգուցեալ Տէր Գէորգ  
Գ. ի խաչանկար սեաւ թաւշեայ դիազարգով սքոզուած գերեզ-  
մանը: Սկսուեց հոգեհանգստեան կարգ Վաղարշապատու եւ  
այլ տեղերից՝ (մանաւանդ Շիրակից ուխտ եկած) երկսեռ խուռնե-  
րազմութեան ներկայութեամբ: Քափօրի հանդիսագիրն էր Ամե-  
նապատիւ Տեղակալ Տէր Մկրտիչ Սրբազան Արքեպիսկոպոսը՝ եւ  
կարգավար՝ պատարագիչ Գեր. Տէր Յովհաննէս Սրբազան Եպիս-